Տ. ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԱԳՅԱՆ

ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ՄԱՍԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ պատմագրության մեջ կարեւոր տեղեկություններ են հաղորդվում ոչ միայն պատմական տարբեր իրադարձությունների, այլեւ տվյալ ժամանակաշրջանի ընդհանուր բարքերի ու սովորույթների մասին, որոնցով ուրվագծվում է այդ շրջանի կյանքի ընդհանուր խճանկարը։ Պատմիչների նկարագրություններն ունեն նաեւ ազգագրական կարեւոր արժեք։ Թաղման ծեսին վերաբերող նկարագրություններն առանձնակի են կարեւորվում, որովհետեւ մեզ հասած հնագույն «Մաշտոցները» թվագրվում են Թ.—Ժ. դարերով։ Հետեւաբար, մինչ այս ընկած շրջանի ծեսերի, այդ թվում եւ թաղման կատարման ձեւի ու նկարագրության առաջին սկզբնաղբյուրներն են դառնում պատմիչների գործերի համապատասխան հատվածները։

Պատմիչների տողերի, տարբեր ժողովների կանոնախմբերի կանոնների, ժողովրդական արարողությունների, ինչպես նաեւ հնագույն «Մաշտոցների» կանոնների համադրմամբ կարելի է պատկերացում կազմել, թե ինչպես է կատարվել թաղման ծեսը հիշյալ դարերում՝ հեթանոսությունից դեպի քրիստոնեություն անցման շրջանում։ Պատմիչների տողերից երեւում է, թե ինչպես դարից դար հեթանոսական անհուսության վրա հիմնված կոծերն ու գրեթե վայրենության հասնող տարբեր արարողությունները, որոնք սերտորեն կապված էին հեթանոսական շրջանի զոհաբերությունների հետ, քրիստոնեության ընդունմամբ աստիճանաբար փոխարինվում են փրկության եւ հարության հույսի վրա խարսխված արարողությամբ, թեեւ թաղման կարգի արտածիսական ժողովրդական մասը շարունակում է որոշակիորեն կապված մնալ հեթանոսական շրջանի հավատալիքների հետ։

Նախաքրիստոնեական Հայաստանում կատարված թաղման ծեսի առաջին նկարագրությունը գտնում ենք Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ. այն վերաբերում է Բելի թաղմանը։ Խորենացին գրում է. «Բայց զդիակն Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, եւ թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ, ի տեսիլ կանանց եւ որդւոց իւրոց»[1]։ Այստեղ ծիսահավատալիքային արտահայտությունն այն է, որ Բելին զմռսում՝ մումիացնում են՝ Հին Արեւելքում եւ մասնավորապես Հին Եգիպտոսում ընդունված սովորույթով։

Արտաշես Երկրորդի թաղմանը նվիրված հատվածով Խորենացին արդեն ներկայացնում է հեթանոսական Հայաստանի թաղման ծեսի ամփոփ նկարագրությունը[2], որից պարզորոշ երեւում է երկու իրողություն։

Առաջին՝ Հայաստանում եւս թագավորական թաղումը կազմակերպել են այնպես, որ երկրային կյանքի թագավորական կենցաղը եւ իշխանության համակարգը շարունակվի նաեւ անդրաշխարհում՝ դառնալով կյանքի շարունակություն։ Թաղման այս ծեսը բնորոշ էր նախաքրիստոնեական շրջանի տարբեր երկրների։

Երկրորդ՝ Խորենացու գրածից պարզորոշ երեւում է, որ Հայաստանում եւս մահացածի հետ կատարվել են խմբակային թաղումներ ու կամավոր մահեր։ Խորենացին թեեւ միայն կամավոր մահերն է հիշում՝ որպես քրիստոնյա պատմիչ մեղմելով գույները եւ Հայաստանը համեմատելով հելլենական մշակույթը կրող երկրների հետ, այնուամենայնիվ նրա նկարագրությունից երեւում է, որ Հայաստանում եւս մահացած թագավորի հետ մարդկանց են թաղել։ Ըստ Խորենացու՝ Արտաշեսի գերեզմանի վրա տեղի ունեցող մահերը նկատի ունենալով է Արտավազդը դիմում հորը.

Մինչ դու գնացեր,
Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակաց ո՞ւմ թագաւորեմ[3]։

---

[1] *«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատ.՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, էջ 37.* Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն, աշխատ.՝ Ստ. Մալխասյանցի, Երեւան, 1981, էջ 113։*

[2] *«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 190–191.* Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն, էջ 203–205։*

[3] *«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 190–191.* Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն, էջ 205։*

Ագաթանգեղոսի շնորհիվ պահպանվել է Հայոց դարձից հետո Գրիգոր Լուսավորչի ձեռամբ կատարված առաջին քրիստոնեական թաղման նկարագրությունը։ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, դիմելով Հռիփսիմյանց կույսերի նահատակության վայրում հավաքվածներին, ասում է. «Եւ արդ՝ եկա՛յք շինեսցուք զվկայարանսն, փոխել զվկայսս ի հանգիստ (ընդգծումը.— Ն. Վրդ. Ա.). զի եւ սոքա փոխեսցեն զձեզ ի նորոգութիւն» (§756)[4]։ Հայաստանում քրիստոնեական թաղման առաջին իսկ հիշատակությունում գերեզմանն անվանվում է հանգստարան, որը ցույց է տալիս քրիստոնեական նոր ըմբռնումը։

Վկայարանների, այսինքն՝ գերեզմանների պատրաստումից հետո, ինչպես ընդունված էր դեռեւս հեթանոսական շրջանի դամբարանային թաղումներում, պատրաստված տեղերը «...զարդարեցին ոսկի եւ արծաթի կանթեղօք լուցելովք, եւ լապտերօք վառելովք, եւ աշտանակօք բորբոքելովք» (§759)[5]։

Վկայարանների զարդարմանը հաջորդում է տապանի (դագաղի) պատրաստումը. «Եւ հրամայեաց մէն մի իւրաքանչիւր արկղագործ, տախտակամած, մայրափայտեայ, բեւեռապինդ, հաստահեղոյս, երկաթագամ տապան գործել» (§760)[6]։ Լուսավորիչը, այս շրջանում դեռեւս ձեռնադրված չլինելով, չի օրհնում սրբերի համար կառուցված վկայարանները։ Նույն ձեւով նա թաղման քահանայական կանոնը չի կատարում, այլ «...զմի մի իւրաքանչիւր ի սրբոցն առեալ յիւրաքանչիւր արկեղ դնէր՝ իւրաքանչիւր հանդերձով եւ իւրեանց կազմութեամբ պնդէր, եւ կնքէր քրիստոսանշան կնքովն» (§760)[7]։

Թաղման ծեսի մասին ոչ միայն ուղղակի նկարագրություններ, այլ նաեւ քննադատական-մեղադրական բնույթի անուղղակի վկայություններ ենք գտնում միջնադարյան հեղինակների երկերում։ Դրանցում հիշվում են թաղմանը վերաբերող հեթանոսական բնույթի այն արարողություններն ու սովորությունները, որոնք մերժել ու դատապարտել են հայ մատենագիրները։ Երբ ի մի ենք գումարում նման բոլոր քննադատությունները, ուրվագծվում է քրիստոնեության առաջին դարերում դեռեւս իր կենսունակությունը պահած եւ հեթանոսական շրջանից եկող թաղման ժողովրդական կարգը։

---

[4] *«Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատ.՝ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Կանայեանցի, 1983, էջ 426։*

[5] *Անդ։*

[6] *Անդ։*

[7] *Ն. տ., էջ 428։*

Դ.—Ե. դարերի մատենագրության մեջ այս առումով ամենաարժեքավորը Փավստոս Բուզանդի եւ Հովհաննես Ա. Մանդակունու (կթղ. 478—490)՝ թաղման կարգը հեթանոսաբար կատարելու մասին քննադատության խոսքերն են։ Ներսես Ա. Մեծի (կթղ. 353—373) գործունեությունը դրվատելով՝ Բուզանդը գրում է. «Եւ առ յոյսն յարութեան ցուցանէր ունել ակնկալութիւն. զի մի՛ զմահ մարդկանն առանց դարձի միւսանգամ կենդանանալոյ համարիցին, եւ անյուսութեամբ ի վերայ գնացելոցն ոճիրս գործիցեն լալեալ կոծոյն, զանառակութիւնս աշխարհին դնելոյ. այլ յուսով Տեառն գալստեանն ակն ունել եւ յարութեանն նորոգութեան, եւ իւրաքանչիւր գործոցն զյաւիտենական հատուցումն առնուլ իւրաքանչիւր յոյս ունելով աւուր գալստեանն Տեառն սպասել»[8]։

Բուզանդն այնուհետեւ գրում է, թե ինչպես Ներսես Մեծի մահից հետո գլուխ են բարձրացնում հին հեթանոսական սովորությունները, եւ այս հատվածը մի հակադրության մեջ ներկայացնում է թե՛ նախաքրիստոնեական շրջանի եւ թե՛ նորահաստատ քրիստոնեության շրջանի թաղման ծեսերը. «...եթէ յանկարծ մեռանէր ոք, ոչ ոք իշխէր անյուսութեամբ արտաքոյ կարգի կանոնի եկեղեցւոյ լալ զմեռեալն. եւ ոչ կոծ ոք դնէր կամ աշխարանս մեռելոյն, եւ ոչ ձայնս ոք արկանէր ի վերայ մեռելոյն յաւուրսն Ներսիսի. այլ լոկ արտասուօք եւ ըստ արժանի սաղմոսիւք եւ օրհնութեամբ, կանթեղօք եւ մոմեղինօք լուցելովք զմեռեալսն յուղարկէին... Ապա յետ մահուան Ներսիսի յորժամ զմեռեալսն լային, փողովք եւ փանդռօք եւ վնօք զկոծսն պարուցն կաքաւելով, զտիգսն հատեալս, զերեսս պատառեալս, արք եւ կանայք պղծութեամբ ճիւաղութեամբ պարուք դէմ ընդ դէմ հարկանելով, եւ կամ ասիս հարկանելով, զմեռեալսն յուղարկէին»[9]։

Բուզանդը նման ձեւով թաղման մի նկարագրություն է բերում՝ գրելով Գնելի սպանության մասին։ Սպանությունը ենթադրում էր ավելի մեծ սուգ եւ վերջինիս արտահայտման ձեւեր։ Կարեւոր հանգամանք է եւ այն, որ այստեղ Արշակն է պատվիրում ողբալ Գնելի սպանվելու համար։ Այսինքն՝ թագավորը ոչ թե փորձում է զսպել հեթանոսական կոծերը, այլ հակառակը, նա է պատվիրում, որ դրանք կատարվեն։ Բուզանդը գրում է. «Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լալիսն, նստեալ լայր զեղբօրորդին

---

[8] ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, *Հայոց պատմութիւն, աշխատ.՝ Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1987, էջ 120։*

[9] *Անդ, էջ 348, 350։*

իւր, զոր ինքն եսպան։ Երթեալ նստէր մօտ առ դին, լայր ինքն, եւ տայր հրաման՝ կոծ մեծ եւ աշխար դնել շուրջ զսպանելով դիակամբն»[10]։

Թաղման կոծի եւ հեթանոսական սովորույթների նկարագրությունն ենք գտնում նաեւ Հովհան Ա. Մանդակունու «Թուղթ մխիթարութեան վախճանելոց յաշխարհէս» ճառում։ Հայոց Հայրապետն ասում է, թե ովքեր իրենց Աստծուն նվիրեցին, այսինքն՝ քրիստոնյա դարձան, չպետք է խայտառակվեն «...հեթանոսական անաւրէնութեամբք, եւ ոչ չարաչար խզել եւ փետել եւ մոխիր ի վերայ նուիրեալ գլխոյն արկանել. այլ ամենեւին ի բաց հեռանալ յանաւրէն եւ ի սատանայական վայիցն եւ յողբոցն եւ անաւրէն ձաղանացն։ Ոչ զհերս փետել հրամայեսցէ քրիստոնէիցն, ոչ զայտս ցտել, եւ ոչ ի կոծ մտանել, ոչ զառիգածն ածել, ոչ զուսովքն մերկանալ, ոչ զճակատն հարկանել, ոչ քուրձ զգենուլ»[11]։

Մանդակունու այս հատվածն առանձնակի կարեւոր է նրանով, որ ցույց է տալիս, թե անգամ Ե. դարի վերջին թաղման ժամանակ ոչ միայն կոծում էին, այլեւ տարբեր աստիճանների խեղման ենթարկում իրենց։ Առաջինը, որ նշում է, մազերը կտրելն ու փետելը՝ պոկելն է։ Թվարկման հաջորդ խումբը կազմում են ինքնախեղման տարբեր ձեւերը՝ այտերը եղունգներով փորելը եւ ճակատը գետնին կամ որեւէ տեղ հարվածելը։ Թե՛ Բուզանդը, թե՛ Մանդակունին եւ թե՛ մի շարք այլ պատմիչներ նշում են, որ թաղման ժամանակ կանայք բացում էին իրենց կուրծքը։ Մանդակունին հավելում է նաեւ ուսերը մերկացնելը։

Սգալու նման ձեւերը հայոց հայրապետը ոչ միայն մերժելի է համարում որպես հեթանոսական ձեւեր, այլեւ տալիս է հետեւյալ հետաքրքիր բացատրությունը, թե ոչ միայն անթույլատրելի է գլխի մազերը կտրել, այլեւ «մոխիր ի վերայ նուիրեալ գլխոյն արկանել», թե նվիրյալ՝ Աստծուն նվիրված գլխին, որը խորհրդանշում է մարդուն, մոխիր լցնել։

Հայ մատենագիրների վկայություններից տեսնում ենք, որ այս սովորույթները թեեւ կենսունակ են մնում հաջորդող դարերում, սակայն զգալիորեն մեղմվում են քրիստոնեական աշխարհայացքի եւ սահմանված կանոնների շնորհիվ։ Կաղանկատվացու պատմության այն հատվածը, որը թվագրված է Է. դարով եւ վերաբերում է Վաչագան թագավորի՝ Աղվենից ժողովի հաստատած կանոններին, ներկայացնում է նույն Է. դարի ըմբռնումները։ Մահացածի վրա կատարվող

---

[10] *Անդ, էջ 190։*

[11] *«Մատենագիրք Հայոց», հտ. Ա., Ե. դ., Անթիլիաս, 2003, էջ 1253։*

լաց ու կոծի մասին ԺԲ. կանոնում ասվում է. «Եւ այնք, որ կոծ դնեն, զտանուտէրն եւ զգուսանսն, կապեսցեն եւ ի դուռն արքունի տարցին եւ պատուհաս ի վերայ դիցեն, եւ ընտանիքն զհետ արտասուել մի՛ իշխեսցեն»[12]։

Հաջորդ՝ Ը. դարի պատմիչ Ղեւոնդը, գրելով Բագրեւանդի ճակատամարտում հայկական բանակի կրած պարտության եւ զոհված 3.000 հայ զինվորների մասին, նրանց վրա սգալու եւ թաղելու համար գրում է. «Եւ եւս դժնդակ նեղութիւն էր, զի եւ ոչ տեղի անգամ գոյր լալոյ եւ ողբոց համարձակապէս զննջեցեալսն, եւ ոչ հաց սգոյ բեկանել ի տունս իւրեանց, եւ ոչ տալ գերեզմանի զվախճանեալսն»[13]։ Այստեղ ասվում է, որ զոհվածների հարազատները արաբների ահից չեն կարողանում զոհվածների վրա սգալ, ինչպես նաեւ սգո հաց՝ հոգեհաց տալ, որն արդեն քրիստոնեական երեւույթ էր եւ ցույց է տալիս, որ քրիստոնեական ծեսը գնալով ամրապնդվում էր ժողովրդական միջավայրում՝ հարկադրանքից վերածվելով գիտակցված ըմբռնման։

Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ում գործում են Կոստանդին Բ. Կատուկեցի կաթողիկոսի (կթղ. 1286–1289) սահմանած կանոնները։ Այս կանոնների Զ. կետով ոչ միայն հեթանոսաբար լացելն ու կոծելն են արգելվում, այլեւ պատվիրվում է քրիստոնեաբար կատարել մկրտությունը, պսակը եւ թաղումը. «Ամենայն քահանայագործութիւն՝ կնունք, պսակ եւ թաղումն, երկիւղիւ եղիցի՝ առանց զրուցի եւ ծաղու. մեծաւ յուսով եւ աղօթիւք մերձակայից»[14]։

Ըստ մարդկային կյանքի ընթացքի՝ այստեղ նշվում են կյանքի երեք գլխավոր կանոնները՝ ծնունդ-մկրտություն, ամուսնություն եւ թաղում։ Կոստանդին կաթողիկոսը, պատահական չէ, որ այս երեք կանոնները միասին է հիշում։ Եթե թաղման ծեսն ուղեկցվում էր հեթանոսական վայրի ձեւեր ընդունող սգով, ապա մկրտությունն ու պսակն էլ արդեն ուղեկցվում էին ժողովրդական ուրախության արարողություններով, որոնք շատ բան էին ժառանգել հեթանոսական շրջանից, եւ կաթողիկոսն զգուշացնում է, որ թե՛ ուրախությունը եւ թե՛ վիշտը պետք է արտահայտվեն համապատասխան պատշաճ ձեւերով։

---

[12] Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, աշխատ.՝ Վ. Առաքելեանի, Երեւան, 1983, էջ 92։

[13] Ղեւոնդ, *Պատմութիւն*, Սանկտ Պետերբուրգ, 1887, էջ 151–152։

[14] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, աշխատ.՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 304։

Ժամանակի ընթացքում թաղման այս ձեւերը գնալով ոչ միայն մեղմվում են, այլեւ անհամեմատ ավելի զուսպ են կատարվում հատկապես քաղաքային միջավայրում եւ գաղթավայրերում։ Ժողովրդական սգո դրսեւորման առումով այս իրողությունը նկատելի է նաեւ այսօր քաղաքային եւ գյուղական միջավայրում կատարվող թաղումների միջեւ։ Այս առումով բնորոշ է Դավրիժեցու հետեւյալ վկայությունը։ Շահ-Աբասի՝ հայերի հանդեպ ունեցած բարյացակամության գլխավոր կետերից մեկը պատմիչը համարում է այն, որ շնորհած տնտեսական ազատություններից հետո շահը թույլ է տալիս հայերին ազատորեն իրենց եկեղեցական արարողությունները, ծիսական կանոնները եւ հատկապես թաղման կարգը կատարել, որպեսզի նրանք չմտածեն վերադառնալու մասին. «...զամենայն կարգ եւ զաւանդութիւնս քրիստոնէական համարձակութեամբ կատարէին քրիստոնեայքն. զկոչնակ հարկանել, զժամ կանչել. զչրօրհնէքն մեծախումբ հանդիսիւ առնել, այլ եւ ինքն շահն եւս գայր ի չրօրհնէքն եւ խրախանայր ի տեսութիւնն։ Եւ զմեռեալսն խաչալամով եւ ձայնիւ շարականաւ հանեալ ի քաղաքէն անցուցանէին ընդ մէջ շուկային՝ եւ տանէին ի թաղել՝ եւ ո՛չ ոք ի պարսից ազգէն եպերանաց եւ հայհոյանաց բանս ասէր»[15]։ Եւ այսպիսի շատ օրինակներով ու տեսակ-տեսակ միջոցներով շահն ամոքում էր քրիստոնյաների սրտերը, որի համար էլ հայերը մնացին Պարսկաստանում։ Այսպիսով՝ Դավրիժեցին առանձնաշնորհման արտահայտություն է դիտում ընդունված եկեղեցական կարգով եւ քահանայի՝ սգո թափորի գլուխն անցած թաղելու՝ հայերին տրված իրավունքը։

Մովսես Կաղանկատվացու «Պատմության» մեջ ունենք նաեւ թաղման ծեսի բանաստեղծական մի նկարագրություն։ Այն գրվել է Աղվանից իշխան Ջեւանշիրի դավադրական սպանության առիթով այդ սպանության ժամանակ իշխանի պալատում հյուրընկալված Դավթակ Քերթողի կողմից եւ կոչվում է. «Ողբ ի մահն Ջեւանշիրի մեծի իշխանի»։ Այս ողբում Դավթակը, գովելով սպանված իշխանին եւ անիծելով սպանողին, գրում է նաեւ թաղման ծեսը հիշեցնող հետեւյալ տողերը.

Ո՛հ, թէ խունկ անուշութեան
Բուրեալ լինէաք քո գերեզմանին։

---

[15] ԱՌԱՔԵԼ ԴԱՒՐԻԺԵՑԻ, *Գիրք պատմութեանց, աշխատ.՝ Լ. Խանլարեանի, Երեւան, 1990, էջ 94։*

Վերացաւ մեր թագ, վերացաւ աթոռ.
Եւ փառք վայելչութեան ընդ քեզ թաղեցաւ[16]*։*

Ժողովրդական սգո եւ եկեղեցական ծեսի միահյուսումն ենք գտնում Ստեփանոս Օրբելյանի՝ Վասակ Գաբուռ իշխանի՝ Թ. դարում կատարված թաղման ծեսի նկարագրության հետեւյալ տողերում. «Ապա առեալ երանելի տիկնոջն Մարիամայ զդի նորա զարդարեալ թագաւորական զարդուք, անհուն ամբոխիւ եւ անչափ աղաղակաւ եւ ողբերգական պարուք փողոց եւ քնարահարաց հանդերձ կաթողիկոսին Զաքարիայիւ տարեալ հանգուցանէին ի քնարանի ընդ հարս իւրեանց»[17]*։*

Արդեն լիովին եկեղեցական արարողությամբ է ներկայացված Սյունյաց Սմբատ իշխանի հուղարկավորությունը, որը վախճանվել էր Թավրիզում 1273 թ., երբ գնացել էր Արղուն խանի մոտ. «Եւ եկեալ ամենայն մեծամեծացն լացին զնա եւ մեծապէս պատուով զարդարեցին զդագաղս նորա արքայակերպ ճոխութեամբ, եւ այնպէս բարձրացուցեալ բազմականօք, խաչիւք վառելովք, ջահիւք եւ մոմեղինօք, պաշտամամբք մեծաձայն, բազմութեամբ քահանայից զարմացուցանելով զաշխարհագումար մայրաքաղաքն՝ հանին հանդիսիւ ընդ դուռն նորա. եւ բերեալ ի հայրենի դամբարանն սուրբ ուխտին Նորավանից. եւ աշխարհախումբ հանդիսիւ եդին ի տապանի ընդ հարս իւր ի թուականին 722 (1273 թ.)»[18]*։*

Թագավորների թաղումը, որը կատարվում էր բարձրաստիճան հոգեւորականության եւ հայոց ավագանու մասնակցությամբ, կոծերի առումով բնականաբար ավելի զուսպ պետք է լիներ, քան ժողովրդական միջավայրում ազատորեն կատարվող սգո արարողություններն էին։ Ցավոք, պատմությունը որեւէ հիշատակություն չի թողել Տրդատ Մեծի հուղարկավորության մասին։ Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն»-ում Տրդատը մինչեւ վերջ ողջ է ներկայացվում, իսկ Խորենացին միայն գրում է, թե թունավորելով սպանեցին նրան, սակայն թաղումը չի նկարագրում։ Հետագա շրջանի ճառընտիրներում գտնվող մի բնագրում, սակայն որը պետք է գրված լինի Ժ.–ԺԲ. դարերում, մանրամասն

---

[16] Մովսէս Կաղանկատուացի, *նշվ. աշխ., 1986, էջ 229–230։*

[17] Ստեփաննոս Օրբէլեան, *Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 172։ Տե՛ս նաեւ* Ստեփաննոս Օրբելյան, *Սյունիքի պատմություն, աշխատ.՝ Ա. Աբրահամյանի, Երեւան, 1986, էջ 175։*

[18] Ստեփաննոս Օրբէլեան, *նշւ. աշխ., էջ 420, տե՛ս նաեւ* Ստեփանոս Օրբելյան, *նշվ. աշխ., էջ 335։*

նկարագրվում է Տրդատի թաղումը։ Այդ հատվածի բնագրագիտական քննությունը ցույց է տալիս, որ այն բնագրային առումով երկշերտ է. մի կողմից՝ զգացվում է Արշակունյաց շրջանի Մեծ Հայքի շունչը, մյուս կողմից՝ Բագրատունյաց Հայաստանի ծիսական կարգը, ուստի կարելի է ենթադրել, որ ճառընտիրային այս բնագիրն իր հերթին գրվել է մի ավելի հին նախօրինակի հիման վրա։ Հիշյալ հատվածում ասվում է. «Եւ բարձեալ տարան զնա ի Թորդան, արծաթապատ դիակիր դագաղօք, յորում լծեալ ջորիք ոսկեսանձք, եւ գունակ հանդերձիւք զդագաղսն զարդարելով, եւ վաշտք զօրացն աստի եւ անտի վառեալք զինուք եւ նշանակօք. իսկ առաջի դագաղացն՝ ձայն աստուածօրհնութեան եւ բուրմունք խնկոց. իսկ աստի եւ անտի՝ բարեկամք եւ սիրելիք, ընտանիք, եւ բազումք յորդւոցն նորա հետեւակ անկեալ. եւ զկնի դագաղացն՝ փողք եւ տաւիղք ողբոց, եւ կուսանք ողբասացք. թող զայլ ամենայն ռամիկսն՝ որ երթային զհետ՝ անթիւ բազմութեամբ»[19]։

Ոսկեսանձ լծված ջորիներով Տրդատին տանելը հիշեցնում է Ս. Գրիգորի՝ Կեսարիայից վերադառնալիս նման ջորիներով այնտեղից մասունքներ բերելը։ Ոսկեսանձ ջորիներով Տրդատին տանելը հիշեցնում է Ս. Գրիգորի՝ Կեսարիայից վերադառնալիս նման ջորիներով այնտեղից մասունքներ բերելը։ Թաղումն ուղեկցվում է նաեւ զինվորական պատիվներով, երբ ճանապարհին դիմավորում են սպառազեն վաշտերը։ Որ Տրդատի մարմինը տարվել է եկեղեցական արարողությամբ, երեւում է այն տողերից, որոնցում ասվում է, թե դագաղի առջեւից հնչում էին աստվածօրհնության ձայները, եւ տարածվել էր խնկի բուրմունքը, այսինքն՝ հոգեւորականները խնկարկություն են կատարել։ Եկեղեցական թաղման եւ հեթանոսական ակունքներ ունեցող ժողովրդական սգո զուգակցումն արտահայտվել է բավականին հետաքրքիր ձեւով։ Եթե դագաղի առջեւից ընթացող հոգեւորականները կատարել են եկեղեցական կարգը, ապա դագաղի ետեւից գնացել են ընտանիքի անդամներն ու ժողովուրդը՝ փող հնչեցնողների, ողբի տավիղներ նվագողների եւ ողբասաց կույսերի ուղեկցությամբ։ Քրիստոնյա անանուն հեղինակը, չցանկանալով գրել «ձայնարկու կանայք», որոնք թաղման ժողովրդական ծեսի անբաժանելի մասն էին, ավելի հոգեւոր բնորոշում է ընտրել՝ «կուսանք ողբասացք»։

---

[19] Հ. Ղ. Ալիշան, *Հայապատում*, Վենետիկ, 1901, էջ 105։

Տրդատի վախճանման ժամանակ Ս. Գրիգորն արդեն առանձնացել էր Սեպուհ լեռան ճգնարանում, ուստի չի մասնակցում հայոց արքայի թաղմանը։ Հովհաննես Ե. Դրասխանակերտցի (կթղ. 898–929) կաթողիկոս պատմիչը նկարագրում է Բագրատունյաց թագավորության հիմնադիր Աշոտ Ա. Բագրատունու թաղումը, որին մասնակցել է եւ ժամանակի հայոց հայրապետը։ Այս նկարագրությունը թե՛ ծիսական առումով եւ թե՛ ընդհանուր պատկերավորությամբ հիշեցնում է Տրդատի թաղման՝ վերը բերված հատվածը։ Դրասխանակերտցին գրում է. «...բարձեալ ապա դիակիր դագաղօք՝ տարան զնա ի թագաւորանիստ աւանն Բագարան, ոսկեհուռն հանդերձիւք եւ ոսկեզօծ վառիւք զդագաղսն զարդարեալ. եւ խումբք զօրաց զինուք եւ զարդուք, ընտրանօք եւ նշանակօք շուրջ պաշտպանեալք մեծի կաթողիկոսին, եւ այլ եւս կղերց եկեղեցւոյ առաջի եւս գնացեալ՝ զխաչակրօն սաղմոսերգութիւնս եւ զձայնս օրհնութեանց նուագէին։ Իսկ երեք որդիք նորա՝ գահերէցք տան արքունի, եւ այլ եւս բարեկամք հետամտէին զկնի դագաղացն»[20]։ Այստեղ եւս սգո թափորն ընթանում է հատուկ զարդարանքներով եւ զինվորական պատիվներով։ Դագաղի առջեւից գնում են կաթողիկոսը եւ այլ հոգեւորականներ՝ սաղմոսներ եւ օրհնության երգեր ասելով։ Նույն կարգով դագաղի ետեւից արդեն ընթանում են ընտանիքի անդամները եւ աշխարհականների բազմությունը։

Այս երթի ժամանակ կոծի եւ համանման այլ ձեւերի մասին որեւէ ակնարկ չկա, փոխարենը դրանք հիշվում են թաղման ժամանակ. «...անդ էր ապա տեսանել կուսանս ողբերգակս եւ արտօսրաթոր կականումն եւ աշխարանս տիկնացն եւ տանտիկնացն, եւ այլ եւս բազմութեան ռամկացն եւ անռամկացն»[21]։ Այսպես ձայնարկու կանայք անվանվում են «կուսանս ողբերգակս», ինչպես Տրդատի թաղմանը նվիրված գործում, որը եւս մի ոճական եւ ժամանակային ընդհանրություն է գծում նրանց միջեւ։ «Անռամկացն» բնորոշմամբ կաթողիկոս պատմիչը ցանկանում է ասել, որ ոչ միայն հասարակ ժողովուրդը, այլեւ նախարարական տների ներկայացուցիչները եւս մասնակից են դառնում այս արտասվաթոր կականումին։ Հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ անգամ Սմբատ թագաժառանգն է մասնակցել նման ողբերին։ Այս մասին

[20] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 143։

[21] Անդ։

Դրասխանակերտցին գրում է, թե Երազգավորսից գալիս եւ հասնում է Սմբատը «վշտահար հեծութեամբ»։ Նրա մոտ է շտապում կաթողիկոսը եւ «...դադար վշտացն տայր, ոչ փոփոխել յընդրի իւր բարրական բնութենէն»[22]։ Այս խոսքերով, թե կաթողիկոսը Սմբատին թույլ չի տալիս փոխվել իր բարեբարո բնավորությունից, Դրասխանակերտցին ցանկանում է ասել, որ կաթողիկոսը Սմբատին թույլ չի տալիս քրիստոնեական իր բարքը փոխել հեթանոսական սգո ձեւերով եւ նմանվել թաղման արարողության մյուս մասնակիցներին։

Թաղման ծեսն արքունական միջավայրում ժողովրդական արարողությամբ կատարելու եզակի մի օրինակ են ներկայացնում Թովմա Արծրունին ու նրա «Պատմության» շարունակող Անանուն Արծրունին, ընդ որում, ԺԱ. դարում կատարված, որը մեկ անգամ եւս վկայում է այդ ավանդների՝ ժողովրդի մեջ խոր արմատներ ունենալը։ Դերենիկ Արծրունուն դավաճանաբար սպանելը սգո մեծ ալիք է բարձրացնում Վասպուրական աշխարհում։ Այս վկայությունը կարեւոր է նրանով, որ ցույց է տրվում, թե նրա թաղմանն ինչ ձեւով են մասնակցել հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչները։ Անհրաժեշտ է նշել, որ այս սպանության մասին լսելով ականատեսներից՝ ինքը եւս խորապես ազդվել է, ու նրա գրածը թեեւ միջնորդավորված, սակայն դարձյալ կարելի է ականատեսի վկայություն համարել։ Որպեսզի հեթանոսական ակնհայտ երանգով կատարված արարողությունը կարողանա համապատասխանեցնել քրիստոնյա պատմիչի իր շարադրանքին, նա փորձում է այն ներկայացնել որպես մի ողբ եւ դա արտահայտելու իրավունքն ավելի ունենալու համար հետեւելով Զաքարիա մարգարեին՝ ասելիքն սկսում է հետեւյալ խոսքերով. «Լացէ՛ք, լացէ՛ք, արեւելք առ արեւմուտս, հիւսիս առ հարաւ, ազգք առ ազգս, ժողովուրդք առ ժողովուրդս» (հմմտ. Զաք. ԺԲ. 12–14)։

Թե ինչպիսի վիշտ են ապրում Դերենիկի զինակիցները, Անանունն այսպես է ներկայացնում. «...Խեղդ զպարանոցաւն արկեալ զարիւնս անձանց փութային հեղուլ, լաւագոյն զմահ քան զկեանս համարելով»[23]։ Այս խոսքերը վկայում են, որ ԺԱ. դարում պահպանվել է ի նշան վշտի՝ ինքնախեղման եւ անգամ ինքնազոհաբերման դիմելը։ Լսելով ամուսնու

---

[22] *Նշվ. աշխ., էջ 144։*

[23] *Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխատ.՝ Մ. Դարբինեան-Մելիքեանի, Երեւան, 2006, էջ 293։*

մահվան լուրը՝ Սոփիա տիկինը սկսում է կոծել մերձավորների հետ. «...տիկնայք եւ աղախնայք թողեալ զկանացի բնութեանն պատիւ՝ ի գոեհս եւ ի փողոցս բացագլխաւ ընդ երկիր զանձինս իւրեանց քարշէին։ Որք յանհնարին սգոյն դառնութեան՝ մատաղ մանկտոյն զսովորականն մոռացան դիեցուցանել զկաթն, ողբոց միայն պարապեալ միմեանց ձայնակցելով։ Ուստի եւ ի կրծաբախ ճակատահար ճայթմանցն եւ ի բարձրաձիչ աղաղակացն հնչեաց դուռն դարպասու արփիագեղ տիկնոջն մեծին Սոփեայ։ Որք յաշխարելն իւրեանց ասէին այսպէս. «Վա՜յ, կորեաւ մեծանուն իշխանն, եւ անտերունչ մնաց երկիրս Հայոց»[24]։ Պատմիչը նշում է, որ կանայք, թողնելով իրենց կանացի բնության ամոթխածությունը, սկսում են ողբալ գլխաբաց եւ գետնատարած՝ անգամ իրենց մանուկներին կուրծք տալն ու կերակրելը մոռանալով։ Սգո սաստիկ դրսեւորումների մասին են վկայում նաեւ Սոփիայի ապարանքից լսվող ճակատին հարվածելու, կուրծք բախելու ձայներն ու բարձրաձիչ աղաղակները։ Միաժամանակ քրիստոնյա պատմիչը, աշխատելով մեղմել «վայ»-երով ողբացող կանանց տեսարանը, այդ «վայ»-երին որոշակի հայրենասիրական երանգավորում է հաղորդում՝ գրելով, որ ամուսնու մահվան լուրն առնելով՝ Սոփիա տիկինը «վայ» է ասում Հայոց աշխարհի անտերունչ մնալու համար՝ այս «վայ»-ը կտրելով ժողովրդական նույնաձեւ ողբերի համատեքստից։ Երբ պարզվում է Դերենիկ իշխանի զոհվելու լուրի ճշմարիտ լինելը, Սոփիա տիկինը գլխին անգամ մոխիր է ցանում։ Անանունն ասում է, որ ինքն այս ամենը լսել է նրանցից, ովքեր «...տեսօղք լեալ էին գործոցն»[25], այսինքն՝ ներկա էին եղել կատարվածին։

Ինչպես որ Սմբատ արքայորդուն կաթողիկոսն է մխիթարում՝ ասելով, թե մի փոխիր քրիստոնյայիդ բարքը, այնպես էլ այստեղ դարձյալ «...հայրապետաց եւ ճգնաւորաց դասք զարթուցանէին զմիտս կնոջն եւ զայլոց կոծողացն յերկիւղն Աստուծոյ, եւ առ սակաւ մի փարատէին աղէտ սգոյն դառնութեան»[26]։ Այստեղ իրավիճակային մի ընդհարություն է ստեղծված Դրաստխանակերտցու «Պատմության» եւ Թովմայի «Պատմության» շարունակող Անանունի գրածների միջեւ։ Փաստորեն, ինչպես որ քահանաներն էին սաստում ժողովրդական միջավայրում վայրենի սովորությամբ կոծելը, այնպես հայրապետն ու բարձրաստիճան

---

[24] ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ԱՆԱՆՈՒՆ, *նշվ. աշխ., էջ 293–294։*

[25] *Անդ, էջ 295։*

[26] *Անդ։*

հոգեւորականներն էին վարվում արքունիքում։ Անանունի բնորոշմամբ՝ նրանք առ Աստված էին արթնացնում կոծողների միտքը եւ իրենց խոսքով մի փոքր փարատում սգո դառնությունը՝ վիշտը։

Ամենազարմանալին այստեղ, սակայն, Անանունի հետեւյալ խոստովանական տողերն են. «Եւ արդ սիրելի էր ինձ եւս հրաշափառագունիւ անցանել բանիւ ընդ ողբերգականացս հանդէս. այլ զի մի լսողացն խռովեսցին միտք՝ լռեսցի»[27]։ Այս խոսքերից կարելի է եզրակացնել, որ Անանունի ժամանակ ժողովրդական ողբն ու կոծն այնքան տարածված են եղել Վասպուրականում, որ ինքը նույնպես ցանկացել է ողբակից դառնալ «ողբերգականացս», մանավանդ, որ իր վրա եւս այնպես ծանր է ազդել այս մահը, սակայն վախեցել է, որ դրանով դիմացիների միտքը կխռովեցնի եւ լուռ է մնացել սգո այդ հանդեսին։ Այս տողերը լավագույնս ցույց են տալիս թաղման ծեսի եւ սգո ժողովրդական արարողությունների տարածվածության մեծ աստիճանը եւ անգամ մտքի նման գործիչների կողմից ընդունելի եւ ընկալելի լինելը։

Թաղման եկեղեցական կարգի կատարումն ավելի հստակ երեւում է հոգեւորականների թաղման նկարագրությունից, քանի որ եկեղեցական միջավայրում բնականաբար առաջնայինը պետք է լիներ եկեղեցական արարողությունը։ Պայմանավորված այն հանգամանքով, թե տվյալ հայրապետը որքանով էր սիրված ժողովրդի կողմից՝ ի հայտ են գալիս ժողովրդական սգո արտահայտություններ, որոնք թեեւ որոշակի պատշաճությամբ, սակայն դարձյալ դրսեւորվում են ավանդական ձեւերում։ Թեեւ Ե. դարի մեր պատմիչները գրում են Ս. Գրիգորի եւ Ս. Արիստակեսի վախճանման մասին, սակայն նրանց թաղման արարողությունները չեն նկարագրում։ Եկեղեցականի թաղման առաջին մանրամասն նկարագրությունը գտնում ենք Բուզանդի երկում, եւ այն վերաբերում է Ս. Վրթանեսի թաղմանը։ Բուզանդը գրում է. «...մեծաւ պաշտմամբ, սաղմոսիւք եւ երգովք հոգեւորօք, կանթեղօք եւ մոմեղինօք եւ խնկածու հոտովք, արքունական կառօք զսուրբն Վրթանէս... մեծաւ լալեաց տրտմութեամբ մինչեւ ի գեւղն Թորդան» են տանում[28]։ «Սաղմոսներով ու հոգեւոր երգերով» արտահայտությունը ցույց է տալիս, որ թաղման կարգի ժամանակ թե՛ սաղմոսներ են ասվել եւ թե՛ հոգեւոր երգեր երգվել։ Ցավոք, սակայն, դժվար է որոշել՝ ինչ լեզվով են ասվել սաղմոսներն ու այդ երգերը,

[27] Ն. տ., էջ 296։

[28] ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, նշ. աշխ., էջ 48։

եւ թե հիշյալ երգերը դարձյալ Աստվածաշնչից ընտրված հատվածներ են եղել, թե՞ սաղմոսների հարաստացությամբ առաջ եկած կցուրդներ, այսինքն՝ այս շրջանում արդեն սկզբնավորվել է հայ հոգեւոր երգը, թե՞ դեռեւս ասվել են թաղման ծեսի ժամանակ հունական եւ ասորական կանոնում կատարվող համապատասխան երգեր։ Բուզանդի այս մի վկայությունը եւս խոսում է այն մասին, որ հուղարկավորության արարողությունն ուղեկցվել է կանթեղների, մոմերի եւ խունկերի կիրառմամբ։ Բուզանդը նաեւ գրում է, թե ժողովուրդն է մասնակցել երկար ճանապարհ անցած հուղարկավորության թափորին «մեծաւ լալեաց տրտմութեամբ», որից կարելի է ենթադրել, որ այն, որպես ժողովրդական սգո արտահայտություն, որոշակիորեն ուղեկցվել է հին կոծերով։

Որ այս շրջանում եղել է թաղման ձեւավորված ծես, վկայում է այն հանգամանքը, որ Բուզանդը գրեթե միանման կերպով է նկարագրում նաեւ Ներսես Մեծի թաղումը՝ չհիշելով միայն ժողովրդական սգո արտահայտությունները, որոնք, իհարկե, եկեղեցական կանոնի մաս չեն կազմում։ Բուզանդը գրում է. «Հանդերձ սաղմոսիւք եւ օրհնութեամբ, կանթեղիւք վառելովք եւ մեծապաշտամամբք եւ բազում յիշատակօք զսուրբն յուղարկեցին»[29]։ Այստեղ Բուզանդը նաեւ մի կարեւոր հավելում ունի՝ «մեծապաշտամամբք», որը ցույց է տալիս, որ թաղման ծեսը հավելվել է նորանոր միավորներով՝ դառնալով մեծ պաշտամունքով կատարվող արարողություն։ Այսպիսով՝ Վրթանեսից մինչեւ Ներսես Մեծն ընկած շրջանում այս կանոնը եւս մի աստիճան ծիսական զարգացում է ապրել։

Սահակ Պարթեւի թաղման մասին գրում է Կորյունը։ Ս. Սահակի վարքը որոշակի վերախմբագրմամբ մուտք է գործել նաեւ «Տոնական» ժողովածու, որն իր հերթին տարբեր դարերում մի շարք վերախմբագրությունների է ենթարկվել։ «Տոնականում» վերախմբագրվել եւ ըստ ժողովածուի գրության (ԺԱ.–ԺԲ. դարեր) ժամանակի է ներկայացվել այս թաղման արարողությունը։ Ասվածն ավելի պարզորոշ ցույց տալու համար ստորեւ բերենք այդ հատվածը՝ ըստ Կորյունի եւ «Տոնականի»։

Կորյուն. «Բարձեալ զսուրբն սաղմոսիւք եւ օրհնութեամբ եւ հոգեւոր բարբառով, յետ սակաւ ինչ աւուրց ընդ տիւ եւ ընդ գիշեր ի Տարօն հասուցանէին»[30]։

---

[29] *Անդ, էջ 334։*

[30] ԿՈՐԻՒՆ, *Վարք Մաշտոցի, աշխատ.՝ Մ. Աբեղեանի, Երեւան, 1981, էջ 136։*

«Տոնական» ժողովածու. «...եւ բարձեալ զմարմին երանելւոյն բազում ամբոխիւ, եպիսկոպոսաւք եւ քահանայիւք, սարկաւագաւք եւ դպրաւք, սաղմոսիւք եւ աւրհնութեամբ եւ երգաւք հոգեւորաւք՝ ածին ի Տարաւն գաւառ»[31]*։*

Վրթանեսի եւ Ներսես Մեծի թաղումների նկարագրության հետ համեմատելիս այստեղ մի էական հավելում կա։ Եթե Բուզանդը նրանց համար գրում էր՝ «սաղմոսներով ու հոգեւոր երգերով», ապա Կորյունը գրում է՝ «սաղմոսներով, օրհնությամբ ու հոգեւոր բարբառով», իսկ «Տոնականի» խմբագրությունում՝ «սաղմոսներով, օրհնությամբ ու հոգեւոր երգերով»։ Եթե ըստ Բուզանդի երկում եղածի՝ կարելի է ենթադրել, որ սաղմոսերգությունից հետո հիշվածը սկզբնավորված հայ հոգեւոր երգն է, կամ օրհնություն ասելով՝ նկատի են առնվում Սուրբ Գրքի համապատասխան այլ հատվածներ, ապա այստեղ արդեն վստահաբար երրորդը վերաբերում է եկեղեցական ծեսերի ժամանակ կատարվող հայ հոգեւոր երգին, որն արդեն սկզբնավորվել էր Սահակ-Մեսրոպյան դպրությամբ։

Կորյունի հատվածի «Տոնականի» խմբագրության մեջ, սակայն, կա մի էական հավելում։ Ասվում է, թե Ս. Սահակի մարմինն առնելով՝ «վաղվաղակի պարսպէին հանդերձանաւք ըստ խորհրդածութեան քահանայապետութեան թաղմանն *(ընդգծումը.— Ն. վրդ. Ա.)»*[32]*։ Ընդգծված այս կապակցությունում ասվում է, որ նրան թաղում են ըստ քահանայապետի թաղման կարգի։ Այսպիսով՝ ԺԲ.—ԺԳ. դարերի խմբագրությունում Կորյունի գրվածքը խմբագրվել է ըստ այս ժամանակաշրջանի եկեղեցական ծեսի, որով եւ նշվել է, թե Ս. Սահակը թաղվել է համաձայն քահանայապետական՝ կաթողիկոսական թաղման կանոնի։*

РЕЗЮМЕ

Ритуал погребения возник в начале истории человечества и изначально основывался на ужасе смерти, горе и безнадежности, а после принятия христианства получил новый смысл и содержание, как церковный канон, основанный на надежде на воскресение.

---

[31] ԿՈՐՅՈՒՆ, *Վարք Մաշտոցի, աշխ.՝ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1994, էջ 124։*

[32] *Անդ, էջ 123։*

Данные из армянской летописи показывают, как совершались ритуалы погребения в Армении дохристианского периода, представляют начало формирования церковного канона, о котором мы формируем наше представления благодаря описаниям патриархов и царей, а также известных церковнослужителей, святых, князей и военачальников. Хронология этих свидетельств показывает, что начиная с IV века и особенно в период Нерсеса Великого Армянская Церковь последовательно боролась против языческого понимания оплакивания и варварских обычаев, стараясь заменить их на христианскую скорбь.

Эти усилия нашли свое выражение и в армянском каноническом праве, где установлены инструкции и специальные наказания за языческие вопли вместе христианской скорби.

Что касается церковного канона погребения, то, как было показано, в IV—VIII вв. он начал совершаться посредством четко сформированного ритуала, о котором мы составляем представление из свидетельств историков и разных летописных источников.

На протяжении веков канон погребения, естественно, подвергался определенным редакциям: вносились ряд добавлений и сокращений. Ритуальное развитие и изменения, однако, относятся не только к оригиналу самого канона погребения, но и к канонам ряда правил погребения, которые постепенно расширяются.

SUMMARY

The burial rite was originated with the history of mankind and originally being based on the fear of death, grief and despair, gained a new content after the adoption of Christianity as a church canon anchored in the hope of resurrection.

The data of the Armenian literature show how the burial ceremonies took place in pre-Christian Armenia, and illustrate the creation of the church canon evidenced by descriptions of the funeral ceremonies of Armenian patriarchs and kings, prominent clergymen, saints, princes and soldiers. According to the chronological course of these evidences, it is obvious that starting from the 4th century, especially from the period of Nerses the Great, the Church has consistently struggled to put an end to the pagan customs of weeping and wild rituals of burial and to replace them with grief and mourning peculiar to Christians.

These efforts have also found their expression in the Armenian canon law, in which special penalties and instructions have been set if pagan weeping is preferred to Christian mourning.

As for the burial canon of the Church, as shown above, from the 4th to the 8th centuries, it began to be performed according to a well-established ritual, as evidenced by the testimonies of historians and various literary sources.

Over the centuries, the burial canon has naturally undergone certain changes with a number of additions and reductions. The ritual development and change, however, do not only refer to the original burial canon, but also to the canons of burial regulations, which are gradually expanding.